

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում տարեկան արձանագրվող բազմաթիվ հրղեհների, բնական, տեխնածին աղետների և պատահարների հետևանքով զոհվում են հարյուրավոր մարդիկ կամ ստանում տարբեր աստիճանի վնասվածքներ, բնակչությանը և պետությանը պատճառվում է միլիարդավոր դրամների հասնող նյութական վնաս: Ձմռան ամիսներին ՀՀ Սյունիքի, Շիրակի և Լոռու մարզերում՝ պայմանավորված աշխարհագրական դիրքով, տեղանքի բացարձակ բարձրությունների զգալի տարբերություններով, դժվարանցանելի, իսկ երբեմն էլ անանցանելի են դառնում բարձր լեռնային տարածքներ և գյուղական համայնքներ տանող ճանապարհները: Ամռան շոգ և չոր եղանակային պայմաններում նշված համայնքների գրեթե բոլոր ստորաբաժանումներն աշխատում են գերբեռնվածությամբ, մի դեպքի վայրից մյուս դեպքի վայր մեկնում անցնելով տասնյակ կիլոմետրեր, երբեմն էլ միաժամանակյա մի քանի դեպքերի արձագանքում՝ զգալի ուշացումներով: ՀՀ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում կան համայնքներ, որոնք գտնվում են սպասարկող հրշեջ-փրկարարական ջոկատներից 32-ից մինչև 48 կիլոմետր հեռավորության վրա և մարտական հաշվարկները, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների արտակարգ իրավիճակների դեպքերի սպասարկման համար, վերընթաց ոլորաններով անցնելիս առավելագույնը 20-30 կմ/ժամ արագությամբ են ընթանում և կանչի վայր հասնում մինչև 50-60 րոպե ուշացումով, որի հետևանքով արձագանքումը դառնում է անիմաստ: Արդյունքում շրջակա միջավայրին, կազմակերպություններին և քաղաքացիներին պատճառվում է զգալի նյութական և բարոյական վնաս:

Թիրախային համայնքներն ընտրվել են նաև այն պատճառով, որ հրշեջ ստորաբաժանումները միմյանցից գտնվում են բավականին մեծ հեռավորության վրա և խոշոր հրղեհների կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում առկա հնամաշ ավտոմեքենաներով միմյանց օգնության մեկնելը գործնականում դառնում է անարդյունավետ և անիմաստ:

Հրշեջ ավտոմեքենաների բարոյապես և ֆիզիկապես մաշված լինելու պատճառով, վերջին տարիներին հաճախակի են դարձել դրանց խափանման դեպքերը շահագործման ընթացքում: Ավտոմեքենաների մի զգալի մասի ջրի բաքերը կոռոզիայի են ենթարկվել և վերանորոգելը դարձել է անհնար: Ջրի պոմպերի և վակուումային համակարգերի անսարքությունները թույլ չեն տալիս անհրաժեշտության դեպքում ջրավազաններից ջուր վերցնել: Հատուկ ագրեգատների և պահեստամասերի բացակայության պատճառով ընթացիկ վերանորոգումները կատարվում են շահագործումից հանված մյուս ավտոմեքենաների դետալներով, քանի որ պահեստամասեր այլևս չեն արտադրվում: Սակայն ավտոմեքենաների մի մասի ընթացային հատուկ ագրեգատները այնպես են մաշվել, որ դրանց հետագա վերանորոգումը և շահագործումը դարձել է անհնար, ուստի ծայրահեղ անհրաժեշտություն է առաջացել այդ ավտոմեքենաները փոխարինել նորերով:

«ԱԻՆ ՓԾ Սյունիքի, Լոռու և Շիրակի ՀՓԾ հրշեջ-փրկարարական ջոկատներում շահագործվող հրշեջ տեխնիկան 1991 թվականից գրեթե չի թարմացվել: Ներկայումս շահագործման մեջ գտնվող հրշեջ տեխնիկան ֆիզիկապես և բարոյապես մաշված է և չի համապատասխանում ներկա պահանջներին: Նշված մարզերի ստորաբաժանումներում շահագործվող հրշեջ ավտոմեքենաները ամբողջությամբ պետք է դուրս գրված լինեին դեռևս 2001 թվականին, սակայն թողնվել են շահագործման մեջ՝ փոխարինելու հնարավորություն չլինելու պատճառով:

Բնակչության և օբյեկտների հրդեհային անվտանգությունն ապահովելու, հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է տեխնիկայի վերազինում և արդիականացում: Յուրաքանչյուր հրշեջ-փրկարարական ջոկատում անհրաժեշտ է ունենալ առնվազն երկու հրշեջ ավտոմեքենա:

Նախորդ ծրագրի շրջանակներում ստացված հրշեջ ավտոմեքենաների շահագործման փորձը ցույց է տալիս, որ ճապոնական հրշեջ ավտոմեքենաներն առավել հուսալի են և որակյալ:

Հրշեջ-փրկարարական ծառայությունների բարելավման ծրագրի համար նախագիծը կենտրոնանում է հրշեջ և փրկարարական գործողությունների իրականացման բարելավման վրա՝ մասնավորապես, հաղթահարելու համար արտակարգ իրավիճակներում և փրկարարական գործողությունների ժամանակ

անհրաժեշտ կարիքները ցանկացած տեսակի աղետների դեպքում՝ ներառյալ տրանսպորտային վթարները:

Սույն ծրագիրն ուղղված է՝

– ՀՀ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում հրշեջ-փրկարարական գույքի բարելավմանը,

– հրշեջ-փրկարարական գործողությունների արդյունավետ իրականացմանը,

– հրդեհների արձագանքման ժամանակի նվազեցմանը,

– ազատված հրշեջ ավտոմեքենաների հիման վրա ՀՀ դժվարամատչելի և հեռավոր բնակավայրերում հրշեջ-փրկարարական հենակետերի ձևավորմանը,

– բնակչության պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը,

– մարդկային կորուստների, ինչպես նաև բնակչությանն ու պետությանը պատճառված վնասի չափի նվազեցմանը,

– համայնքների կայուն զարգացմանն ու սոցիալական խնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով համակարգի դերը բնակչության պաշտպանության բնագավառում՝ առաջարկվող ծրագիրը շատ կարևոր է Հայաստանի Հանրապետության համար:

Նախագծի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ համակարգի թիրախային ստորաբաժանումներում կա պահանջվող քանակության ժամանակակից հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների պակաս:

Հրշեջ-փրկարարական ջոկատներն արձագանքում են բոլոր տեսակի արտակարգ դեպքերին:

ՀՀ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի հրշեջ-փրկարարական ջոկատները հիմնականում բաղկացած են 8-9 հրշեջ-փրկարարներից: Այդ ջոկատները պետք է ունենան արագ և արդյունավետ արձագանքելու հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներ: Վերջին տասնամյակում մեր երկրի տնտեսական վիճակով պայմանավորված՝ նախարարությունը հնարավորություն չի ունեցել թարմացնել նշված մարզերի հրշեջ-փրկարարական ջոկատների ավտոմեքենաները, ուստի, ջոկատների անձնակազմի կարողությունները լիարժեք չեն օգտագործվում:

Հիմնվելով վերոնշյալի վրա՝ նշված մարզերի համար անհրաժեշտ են նոր հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներ՝ արագ արձագանքելու և մարդկային կորուստները նվազեցնելու համար:

«Հայաստանի Երևան քաղաքում հրդեհաշիջման սարքավորումների բարելավում» ծրագիրը սկսվել է 2008թ:

2010թ. հուլիսին Ճապոնիայի կառավարությունից փրկարար ծառայությունը ստացել է հրդեհաշիջման 28 միավոր տեխնիկա, ծրագրով նախատեսված հրշեջ ավտոմեքենաները կառավարության կողմից տրամադրվել են 2010թ. օգոստոսի 11-ին և ցուցադրվել են բնակչությանը Երևանի կենտրոնական հրապարակում: Երևանի հրշեջ-փրկարարական ստորաբաժանումները հագեցվել են ստացված ավտոմեքենաներով: Միևնույն ժամանակ նախկինում Երևանում շահագործված ավտոմեքենաները տրամադրվել են Հայաստանի ավելի փոքր քաղաքներին:

Նախկին ծրագրի բոլոր փուլերում ՓԾ իրականացրել է մեծ թվով գործողություններ ճապոնական կողմի ներկայացուցիչների հետ համատեղ, որոնք սկսվել են քննարկումներով: Աշխատանքները դադարել են հայտին առնչվող տեխնիկական և ֆինանսական տեսակետերից լավագույն լուծումներ գտնելու փաստարկով: Հայաստանյան կողմի աշխատանքային խումբն ընթռնել և սովորել է ճապոնացի մասնագետների աշխատանքի փորձն ու ոճը: (JICA-ուսումնասիրությունները և եռափուլ ուսումնական ծրագիրը):

Ելնելով ասվածներից՝ նպատակահարմար է ստորագրել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի համար» հայտագրերի փոխանակմամբ կնքվող դրամաշնորհի Համաձայնագիրը:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ



ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ